

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 7-ին, շաբաթ օրը, Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Մայր Աթոռի միաբան տ. Արսեն վրդ. Բերբերյանին:

Տ. Արսեն վրդ. Բերբերյանը ծնվել է 1937 թվականին Ալեքսանդրիայում: Նա իր սկզբնական կրթությունը ստացել է տեղի Հայկազյան վարժարանում: 1947 թվականին ընտանիքով հայրենադարձվել է և բնակություն հաստատել Լենինական քաղաքում, ուր և ստացել է իր միջնակարգ կրթությունը:

1955 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1960 թվականին՝ ավարտական ունենալով «Կոմիտաս վարդապետը և հայ եկեղեցական երաժշտությունը» նյութը:

1955 թվականին նա ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1965 թվականին տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանից՝ աբեղա և նշանակվում Վեհափառ Հայրապետի գավազանակիր ու միաժամանակ՝ հոգևոր ճեմարանի ծիսագիտության ու հայ եկեղեցական երաժշտության դասատու: 1963 թվականին նա գրում է իր վարդապետական ավարտական աշխատությունը «Ներսես Շնորհալու տաղերը» նյութի շուրջ, որի համար Օշականում Վեհափառ Հայրապետից ստանում է վարդապետական մասնավոր իշխանության աստիճան:

Տ. Արսեն վրդ. Բերբերյանը 1967 թվականին մեկնում է Ժնև և տեղի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ինստիտուտում ծանոթանում ժամանակակից էկումենիկ շարժման գործունեությանը:

1968 թվականին նշանակվում է Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ և այդ պաշտոնում մնում մինչև 1971 թվականի վերջը:

Տ. Արսեն վարդապետը 1969 թվականին ընդունվում է Լոնդոնի համալսարանի Կինգս կոլեջի աստվածաբանական ֆակուլտետի եկեղեցական պատմության բաժինը, որն ավարտում է 1972 թվականին և, պաշտպանելով «Հայերի և անգլիկան եկեղեցու հարաբերությունները 1841—1905 թթ.» ավարտական աշխատությունը, ստանում իմաստասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Այժմ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը վարում է Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչի պաշտոնը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանին այս ուրախ առիթով և նրան բարեմաղթում նորանոր հաջողություններ՝ իր ապագա հոգևոր-եկեղեցական գործունեության ճանապարհի վրա: